**Հավելված N 3**
**ՀՀ կառավարության 2006 թվականի**
**նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման**

**Ձև**

## Հ Ա Յ Տ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | ***Փարաքար համայնքի Մուսալեռ, Մերձավան, Փարաքար, Այգեկ, Բաղրամյան, Նորակերտ բնակավայրերի բազմաբնակարան շենքերի վերանորոգում և բարեկարգում*** |
| **Մարզ** | *Արմավիրի մարզ* |
| **Համայնքը /համայնքները** | *Փարաքար համայնք*<br><br>*Մասնակից բնակավայրերը՝, Մուսալեռ, Այգեկ, Մերձավան, Փարաքար, Բաղրամյան, Նորակերտ* |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | *Փարաքար՝ Երևանից՝ 6*կմ,<br>Մարզկենտրոնից՝ 33 կմ<br><br>*Նորակերտ՝ Երևանից՝ 15*կմ,<br>Մարզկենտրոնից՝ 35 կմ<br><br>Մուսալեռ՝ *Երևանից՝ 12*կմ,<br>Մարզկենտրոնից՝ 32 կմ<br><br>Մերձավան՝ *Երևանից՝ 15*կմ,<br>Մարզկենտրոնից՝ 35 կմ<br><br>Այգեկ՝ *Երևանից՝ 15*կմ,<br>Մարզկենտրոնից՝ 39 կմ<br><br>Բաղրամյան՝ *Երևանից՝ 15*կմ,<br>Մարզկենտրոնից՝ 35 կմ |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | Համայնքի՝ 28 685 մարդ,<br><br>Ծրագիրն իրականացնող բնակավայրի /բնակավայրերի՝<br>Փարաքար՝ 9518<br>Նորակերտ՝ 3198<br>Մերձավան՝ 3912 մարդ,<br>Այգեկ՝ 1644 մարդ,<br>Մուսալեռ՝ 3051 մարդ |

| | |
|---|---|
| | |
| **Սահմանամերձ համայնք/բնակավայր** | - |
| **Բարձր լեռնային համայնք /բնակավայր** | - |
| **Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն** | *Այո (Փարաքար բնակավայրի դեպքում)* |
| **Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝**<br><br>**- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,**<br><br>**- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,**<br><br>**- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,**<br><br>**- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ** | ***Փարաքար բնակավայրում՝***<br><br>*Փարաքար բնակավայրում 24 ժամյա ջրամատակարարում ունի համայնքի 70%-ը, և 5 ժամյա ջրամատակարարում՝ 27%-ը:*<br><br>*Ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ են ընթանում համայնքի Թաիրով գյուղում, իսկ Փարաքար գյուղում ջրահեռացման համակարգից օգտվում է բնակչության 70%-ը:*<br><br>*Բնակավայրի բնակիչների 80%-ը օգտվում է գազամատակարարման համակարգից*<br><br>*Բնակավայրի բնակչության 70%-ը օգտվում է ոռոգման համակարգից:*<br><br>*Գյուղատնտեսական նշանակության հողերի 100%-ն ունի ոռոգման հնարավորություն:*<br><br>*Բնակավահևւ փողոցները լուսավորված են 65%-ով. Նաիրի և Երևանյան փողոցներում առկա է ԼԵԴ լուսավորություն,Նաիրի փողոցի լուսավորությունը էներգախնայող է:*<br><br>***Նորակերտ բնակավայրում՝***<br>*-Համայնքի բնակչությունը 100%-ով օգտվում է 24-ժամյա ջրամատակարարումից: Ջրահեռացումը կատարվում է անհատական:*<br>*- Գազամատակարարման համակարգից օգտվում է բնակչության 90%-ը:*<br>*-Ոռոգման համակարգից օգտվում է բնակչության 50%-ը : Գյուղատնտեսական հողատեսքերից ոռոգվում է 15%-ը:*<br>*-Համայնքի փողոցները լուսավորված են 100%-ով, որից 90%-ը՝ ԼԵԴ էներգախնայող լուսավորություն:*<br><br>***Մուսալեռ բնակավայրում՝***<br>*Համայնքում ջրամատակարարման համակարգից օգտվող բնակչության տոկոսը՝ 84.7%, ջրամատակարարման տևողությունը՝ շուրջօրյա, ջրահեռացման համակարգ առկա չէ:*<br><br>*Գազամատակարարման համակարգից օգտվող բնակչության տոկոսը՝ 59.1%,*<br>*-Ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը՝ 54.01%*<br>*-Գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը՝ 54.02%*<br>*-Լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների* |

| | |
|---|---|
| | տոկոսը՝ 85%<br>էներգախնայող և ԼԵԴ լուսավորության տոկոսը՝ 40%<br><br>**Այգեկ բնակավայրում՝**<br>-գործում է խմելու ջրի 4-ժամյա մատակարարման ռեժիմ, Բնակավայրում կենտրոնացված ջրահեռացման համակարգ առկա չէ և բնակիչները օգտվում են անհատական կոյուղիներից:<br>-100% մշտական էլեկտրամատակարարում,<br>-80% գազամատակարարում,<br>-Բնակավայրում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքը կազմում է 40%, իսկ ոռոգման համակարգից օգտվող բնակչությունը՝ 10%:<br>-90% էներգախնայող և 70% ԼԵԴ փողոցային լուսավորությամբ:<br><br>**Մերձավան** բնակավայրում՝<br><br>-Մերձավան բնակավայրի բնակչությունը 100%-ով օգտվում է 18-ժամյա ջրամատակարարումից: Համակարգը կառավարվում է <<ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ>> ՓԲԸ կողմից: Ջրահեռացումը կատարվում է 30%-ով, մնացածը կատարվում է բնակիչների կողմից տեղային կոյուղու կառուցման միջոցով: Մերձավան բնակավայրի գազամատակարարումն իրականացվում է <<Գազպրոմ-Արմենիա>> ընկերության կողմից: Բնակավայրի նորակառույց թաղամասն ունի գազաֆիկացման խնդիր, 958 տնտեսություններից գազաֆիկացված են 748 կամ 78 %-ը:<br>-Ոռոգման ցանցը գտնվում է բավարար վիճակում, բնակավայրում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքները՝ 42%, ոռոգման համակարգից օգտվում է բնակչության 48%-ը:<br>- Մերձավան բնակավայրի էներգահամակարգը կառավարվում է <<Հայաստանի էլեկտրոցանցեր>> ընկերության կողմից: Փողոցային լուսավորությունը 70% է, բոլորն էլ էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն: Գիշերային լուսավորության ժամերը օրվա կտրվածքով՝ ամռանը 5 ժամ, իսկ ձմռանը 8 ժամ է:<br><br>**Բաղրամյան** բնակավայրում՝<br><br>Բնակավայրում գործում է խմելու ջրի 24 ժամյա մատակարարման ռեժիմ,<br>100% մշտական էլեկտրամատակարարմամբ,<br>80% գազամատակարարմամբ,<br>Բնակավայրում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքը կազմում է 60%, իսկ ոռոգման համակարգից օգտվող բնակչությունը՝ 10%:<br>100% էներգախնայող և ԼԵԴ փողոցային լուսավորությամբ:<br>Բնակավայրում կենտրոնացված ջրահեռացման համակարգ առկա չէ և բնակիչները օգտվում են անհատական կոյուղիներից: |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | Բազմաբնակարան շենքերի տանիքների ապամոնտաժում, դռների և պատուհանների ապամոնտաժում, տանիքների կառուցում, դռների և պատուհանների տեղադրում, մուտքերի հարդարում: |

| | |
|---|---|
| | *Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ համայնքի բազմաբնակարան շենքերի շուրջ 4500 բնակիչներ հնարավորություն կունենան ունենալ չոր և ամուր տանիք, շենքերի մուտքերը կլինեն մաքուր և ապահով բնակիրների համար:*<br>*Բաղրամյան և Նորակերտ բնակավայրերում շենքերում բացակայում են դռներն ու պատուհանները ամբողջությամբ, մյուս բնակավայրերում մասամբ:*<br>*Փարաքար, Մուսալեռ, Այգեկ և Մերձավան բնակավայրերում գոյություն ունեցող դռներն ու պատուհանները գտնվում են ծայրահեղ վատ վիճակում:*<br>*Բոլոր բնակավայրերում վատթար վիճակում է շենքի մուտքը և դեպի տներ տանող ամբողջ հատվածները, սանդուղքները, պատերը:*<br>*Վերընշված խնդիրները ազդում են բնակիչների կյանքի որակի վրա, անվտանգության զգացողության վրա:*<br>*Վերանորոգման ընթացքում հնարավորություն կստանանք նաև որոշակի չափով ջերմամեկուսացնել շենքերը և բնակիչների համար ապահովել բարձր անվտանգություն:*<br>*Ծրագրի իրականացումը շատ կարևոր է նաև բնակիչների անվտանգության համար, շենքերի մեծ մասում բացակայում են դռները, պատուհանները:*<br>*Ծրագրի արդյունքում կբարելավվի նաև համայնքի արտաքին տեսքը:*<br>*Նախատեսվում է նաև շենքում լուսավորությունը իրականացնել արևային լուսատուներով, ինչի արդյունքում երեկոյան լուսավորության ծախսերը կմինիմալացվեն:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ունենալ ավելի քան 1100 բնակարաններում բնակվող ընտանիքների համար հարմարավետ և բարեկարգ մուտք դեպի սեփական բնակարան:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | *Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝*<br>1. *Աշխատանքների իրականացման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում*<br>2. *Աշխատանքների իրականացման համար մրցույթի անցկացում*<br>3. *Մրցույթի հաղթող կազմակերպության հետ պայմանագրի կնքում*<br>4. *Աշխատանքների իրականացման համար շինարարական թույլտվության տրամադրում*<br>5. *Աշխատանքների իրականացման համար նախապատրաստական աշխատանքների իրականացում*<br>6. *Բուն աշխատանքների իրականացում* |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ** | *Աշխապանքները իրականացվում են բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային գույքի վրա:* |

| | |
|---|---|
| **բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *-Ծրագրի շահառուների թիվը կազմում է 4500:*<br>*Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա նոր վերանորոգված և կահավորված շենք, ինչն էլ առավել հարմարավետ պայմաններ կստեղծի բնակչի որակյալ կյանքի կազմակերպման համար:*<br>*Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի համաչափ զարգացմանը* |
| **Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | *Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի շուրջ 20 ժամանակավոր աշխատատեղ:*<br><br>*Ծրագրի իրականացման ավարտին նոր հիմնական աշխատատեղերի ստեղծում չի նախատեսվում:* |
| **Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը** | Նախորդ տարվա բյուջեն՝ 702  646 հազար դրամ.<br>*Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:* |

| | *Պլանը* | *Փաստացին* | *Տոկոսը* |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 726 834 000 | 702 646 000 | 96,6 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 415 419 000 | 425 276 000 | 102,3 |
| *- Սեփական եկամուտներ* | 138 257 000 | 253 291 000 | 183,2 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 311 415 000 | 277 370 000 | 89,06 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 726 834 000 | 702 646 000 | 96,6 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 415 419 000 | 425 276 000 | 102,3 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 311 415 000 | 277 370 000 | 89,06 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 311 415 000 | 277 370 000 | 89,06 |
| *- ճանապարհաշինություն* | | | |
| *- ջրամատակարարում* | | | |
| *- փողոցային լուսավորություն* | | | |
| *- գյուղատնտեսություն* | | | |
| - | | | |
| - | | | |

<table>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն</td><td>Ընթացիկ տարվա բյուջեն մանրամասն կներկայացվի բյուջեի հաստատումից հետո:<br><br>Ընթացիկ տարվա բյուջեն նախատեսվում է 1 446 027 800 դրամի չափով:<br><br>
<table>
<tr><td></td><td>Պլանը</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում<br>այդ թվում՝</td><td>1 446 027 800</td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝</td><td>866 027 800</td></tr>
<tr><td>- սեփական եկամուտներ</td><td>365 000 000</td></tr>
<tr><td>- Ֆոնդային բյուջեի եկամուտներ</td><td>580 000 000</td></tr>
<tr><td>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,<br>որից՝</td><td></td></tr>
<tr><td>- Վարչական բյուջեի ծախսեր</td><td></td></tr>
<tr><td>-Ֆոնդային բյուջեի ծախսեր</td><td></td></tr>
<tr><td>Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝</td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
<tr><td>-</td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով</td><td>Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեով կանխատեսվող սեփական եկամուտները կազմում է 365 000 հազար դրամ, ֆինանսական համահարթեցման դոտացիան կազմում է 501 027,8 հազար դրամ, ընդհանուր եկամուտները 866 027,8 հազար դրամ:<br>2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ վարչական և ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ուղղվելու է ֆոնդային բյուջե և կազմում է 580 000 հազ. դրամ:<br>Ծրագրի համար նախատեսվել է 52 000 հազար դրամ կամ ծրագրի արժեքի 65 %-ը: Ծրագիրն ամբողջությամբ իրականացնելու համար ակնկալում ենք ստանալ ՀՀ պետական բյուջեից նպատակային սուբվենցիա՝ 28 000 հազար դրամ կամ ծրագրի արժեքի 35 %-ը:</td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝<br><br>- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 4 000 000 դրամ,<br><br>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 400 000 դրամ,<br><br>- ինժեներաերկրաբանական</td><td>80 000 000 ՀՀ դրամ (100%)</td></tr>
</table>

| | |
|---|---|
| **հետազոտության ծառայության արժեքը՝ 200 000 դրամ,**<br><br>**- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 1  800 000 դրամ,**<br><br>**- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 600 000 դրամ,**<br><br>**- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ 300 000 դրամ,**<br><br>**ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _________ դրամ** | |
| ***Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը*** | ***48  000  000 դրամ*** (60%) |
| ***Այլ ներդրողներ*** | **4  000  000 ( 5% )** |
| ***Ծրագրի իրականացման փնողությունը*** | ***Սկիզբը՝  01 հունիսի, 2022թ.***<br><br>***Տևողությունը՝ 4 ամիս*** |
| ***Ծրագրի ծախսերը*** | Ծախսերը մանրամասն կներկայացվեն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումից հետո: |
| ***Ամսաթիվ*** | *31 հունվարի, 2022թ.* |

Համայնքի տնտեսական պատասխանատու **Լիլիթ Պետրոսյան**
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը +37493000352 lilpetrossiann@gmail.com

---

Համայնքի ղեկավար **Ղարիբ Մինասյան**
(անունը, ազգանունը)

Կ. Տ